

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԻՄԻ ԵՒ ՀԱՐԱԹ

Rev. Pere G. Kalémkarian M. chitarist ngasse
N° 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիտիկայի համար Տարեկան 12 ֆր.
» Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ
հոտով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տոյ վեցամս 1.50
ԿԱՆԻՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դիկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԹՆԱ (Պուլխարա)
Редакция на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
ես չեն ընդունուի եւ յարմար դասուած
ներք միայն կը հրատարակուին առ-
թողութիւն կամ մասամբ:
Դասուցումն սուր 20 ամսով: Երե-
սին աւելի անգամներու համար 20 0/0
գնոյ կը լինի:

ՍԱՔՐԷ ԶՈՒՐԶԴ, ՈՐ ԶԸ ՀՈՏԻՍ

Առեւն աստիճանի վրայի դռնով
թեմաք քննադատուի եւ քաջա
էջիւն մէջ մեր վարժարաններու
ավարտիչները եւ ասոր անմիջական
պատճառներէն գլխաւորը հոգով մեր
վարժարանական տարրը:

Այս վերջիններու մէջ գտնուի
են անանկ ապուշներ, որ մեր ընդ-
հանուր տեսութիւնները սեփական
նպատակները եւ ինքնինքնին մեղքի
նշարին մէջ նետուի են կամովին,
«աս անարկուծութիւնները մեզի հա-
մար են» ըսելու չափ ցնորած ու
խելոյից:

Հիմա՞ որ այդ տխուր սեփա-
կանացման զոգանդով վախճանեն
ըր կուգան կը հասնին մինչեւ մեր
ակունքները, տեղի եկած կը կար-
ծինք՝ աւելի զօրեղ շնչով մը,
անգամ մըն ալ պոռալ այդ ապուշ
ներու երեսին թէ՛

Այո՛, մեր քննադատութիւններ-
ը, մեր անարկուծութիւնները ա-
նոց համար են, որոնք վարժա-
րանական սուրբ գործը չափած ու
ձեւած են իրենց անձնական հա-
շիւներուն վրայ եւ խիզճ ունեցած
չեն օրէ օր կ'ստնային մէջ նետուելու
պատրաստուող պատանեկութեան
ապագան սպաննելու, մուծ, ա-
նորջ տարածած ու անարդարացու-
ցիչ դաստիարակութեան մը բոլոր
գաւն հետեւա՛քներովը...

Անոց համար է, որոնք գոր-
ծին միմիայն նիւթական կողմընը
կատողութեան առնելով, արհա-
մարհած են բոլոր բարոյական
պարտքերու ծանրութիւնը, որ
այլապէս՝ մի քիչ խզճի խայթով
բարախող կուրծքերու համար,
գերեզմանային քարի մը կշիռը
պիտի ունենար...

Անոց համար է, որ չլացուցիչ
ծրագիրներու ռէքլամներով ծովին
վրայ կերի տեղ թոյն սփռող եւ
չատ մը ձուկերու դիականց տիրա-
ցող ձկնորսներու անգլիկութեամբը
իրենց պաշտօնավարած հաստատու-
թիւնը իբր կրթական դրոշմ տնի
կայացուցած են ժողովուրդին եւ
անոր մտքի թունաւոր թմրութե-
նէն օգտուելով, դժուրք կրակնե-

րուն մէջ բռնած անմեղուկ հրեշ-
տակները...

Անոց համար է, որոնք մարդ-
կային ամեն տարրական պարկեշ-
տութիւն, ամեն ազնուութիւն եւ
ամեն սրբութիւն իրենց անտա-
կան հասակէն սկսեալ ոտքի տակ
առած ըլլալով հանդերձ, կը յան-
դգին տակաւին ազգին բարոյա-
կան շէնքին ծառնալու եւ հրէշային
հեղուկութեամբ մը ապագայ աղէտ
ուր հեռագրակերպին վրայ ծի-
ծաղելու: Հեռագրակերպ, ուր մը
տնայնաւորուած կը տեսնեն իրենց
աղտոտ են ու յաջորդութիւնը...

Խօսք հասկանք. անոց համար
է, որոնք ամեն պարկեշտ մարդու
խորունկ պագանքին եւ ամենախո-
րունկ զգուշքին նշաւակը
դարձած ըլլալով հանդերձ, տա-
կաւին մինչեւ այսօր իրենց նե-
խած ու գարշիլի շնչով կը թու-
նաւորեն մի կրթական տաճարնե-
րուն մթնադրուող, լրբութիւնը՝ իր
ծալարագոյն աստիճանին հասցնե-
լով...

Եւ շատ ու շատ է կարծիս այս-
քան մէկը միւսէն աւելի գարշե-
լի մակարոյծներու գոյութիւնը,
որ իրաւունք տայ մեզ՝ իբր պա-
տասխան իրենց բոլոր տրտունջնե-
րուն, այս էջով իրենց չկարմրած
երեսնիւն ձօնելու Մօնթէսքիօի
մէկ փառաւոր ապստակը:

Մաքրէ՛ չուրջդ, որ չը հոտիս:
Տ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Օռանժը պաշտօնապէս կցուե-
ցաւ Անգլիոյ, այդ անկախ երկի-
րը այսօր Բրիտանական կայսրու-
թեան մէկ պարզ նահանգն է. եւ
երբեմն ազատ Օռանժին ալ Անգ-
լիական հպատակ մը: Հաւանաբար
չատ մօտ է այն օրը որ Թը-
րանսկալին ալ պիտի որդեգրուի
Անգլիոյ կողմէ: Արդէն թագու-
հին դրօշը պարզուեցաւ Եոհն-
նէսպուրկի սակիներու քաղաքին եւ
Բրէթօրիայի նախագահական պա-
լատին վրայ: Միւր նախորդ տե-
սութիւններէն միոյն մէջ ինչպէս որ
կըսէինք, ալ լմնցած խնդիր մ'է

Թրանսկալի խնդիրը. այսօր հա-
րաւային Ափրիկէն անպայման կեր-
պով Բրիտանական իշխանութեան
տակն է վերջնականապէս:

Պօէր զօրապետներ տակաւին կը
չարունակեն պատերազմի դաշտին
վրայ դեգերիլ, եւ Պօէր նախարար-
ները թէեւ քանի մը օրէն իրենց
մայրաքաղաք ընելու գիւղ մը իսկ
չպիտի գտնեն: Ժողովուրդը յու-
սահատած եւ Անգլիացոց դիմադ-
րիւն անկարելիութեան բացարձա-
կութեանը կատարելապէս համոզ-
ուած, կը համակերպի իր նոր ճա-
կատագրին եւ չուրի պատերազմը
չարունակել որ անօգուտ արիւնհե-
ղութիւնէ անդին բանի մը չը պիտի
ծառայէ:

Թրանսկալի պատերազմով Անգ-
լիա ոչ միայն երկու սակերքի հա-
րուստ երկիրներ իրեն գաւառ ը-
րաւ, այլ այդ պատերազմը պաղ-
արին Անգլիացիին ասպետական
զգացումները արթնցուց որ այսօր
կաշխատի պատկառելի եւ մեա-
յուն բանակի մըն ալ տէրը ըլլալ:

Օռանժի նախագահ Եթմայն որ
չապիկ փոխելու պէս մայրաքա-
ղաք փոխեց, ալ իրեն ու իրենե-
րուն ապաստանելիք տեղ մը չը
գտնելով Եւրոպոյ կանցնի: Իսկ
Քրիւկէր նախագահը, որուն գերի
իյնալը թէեւ անգլիական թիւթե-
րէն ոմանք գրեցին բայց չը կրկ-
նուեցաւ եւ չը հաստատուեց ու,
եթէ տոկաւին ազատ է անշուշտ
մօտ օրէն պիտի երթայ իր Եթմայն
բաղդակից բարեկամին քով: Ա-
շաղ փառաւոր անձնաւորին միտին
բսկու. եւ խորապէս համոզուելու որ
իրաւունքը զօրաւորինն է լուսա-
ւորեալ եւ քաղաքակրթի 20րդ դա-
րուն ալ, ինչպէս էր նախորդ եւ
միջին դարերուն մէջ:

Յրանսայի Մարքի հետ ունե-
ցած խնդիրը ծանօթ է. հիմա օ-
րէ օր կապաստի որ հիմէ ոչ Մա-
ւաքը ամբողջ՝ գէթ անկից կարե-
նոր մաս մը Յրանսայի անցնի:
Ռուսիա Յրանսայի խորունկ բա-
րեկամութեամբ եւ միջոցներուն շը
նորհիւ հին դաշնագիրները սրբա-
զրեց եւ նախադր նշանակելի յաջո-
ղութիւններ ունեցաւ Ասիոյ մէջ:
Արդ ժամանակ է որ Յրանսան ալ
աճապարէ իր կարգին կռնակը
Ռուսիոյ տուած Հիւսիսային Ա-
րեւմտեան Ափրիկէի քարտէսը փո-
խելու:

Բայց Կաղիթա հաղիւ Թէ Մա-

րքի սահմաններուն փակած, ա-
հա նորէն մէջտեղ կենէ Տրէյֆիւ-
սի յաւատեական խնդիրը, խըն-
դիր մը որ Յրանսական բանակին
սիւնները համարուող այնչափ զօրա-
պետներու, սպաննու անկման
պատճառ եղաւ:

Նորէն այդ խնդրոյն հետեւա-
նօք այսօր կը հրաժարի պատե-
լազմական նախարար Զօր. Կա-
լիֆէ, բանակին խաղաղուած կար-
գապահութեան վերահաստատիչը:

Յրանսական ներկայ դահլիճին
թշնամիները նորէն մէկ կողմէն
կարծարծեն այդ հրադային խնդիրը
եւ փոխարէն Տրէյֆիւս ալ յայտնի
կը յայտարարէ իր վերաքննութիւն
ուզելը եւ ներումը չընդունիր:

Անգլիոյ, Սիւրիկայի եւ Զա-
րոնի, բարեկամական յարաբերու-
թիւնները երթալով ալ աւելի հաս-
տատ հիմերու վրայ կը դառնան:
Այդ երեք մեծ պետութեանց մէջ
կատարեալ համաձայնութիւն գո-
յացած է, որ քիչ օրէն հա-
ւանական է որ վճռական պարա-
գայի մը յայտնի դաշնագրու-
թեան ձեւը առնէ: Այս երեք տէ-
րութեանց միութեանէն կը ծնի ծո-
վային անշուղական հոյակապ զօ-
րութիւն մը, ուրկէ անշուշտ դուրս
չպիտի մնայ Խաղիան ալ, որոնք աշ-
խարհը կը պաշարեն եւ կրնան ցա-
մաքային ահեղ զօրութիւնները հա-
կակցել եւ գործողութիւնները սահ-
մանաւորել:

Ռուսիոյ Հայաստանի վիճակին
նկատմամբ յայտնի բողոքներ ը-
նելէ եւ Աւստրիական կառավարու-
թիւնը քննութիւն մը բանալու
հարկադրելէ յետոյ, նորէն ազդարա-
րած է թուրքին, հայոց նկատմամբ
զգուշաւորութեամբ եւ պատշաճօ-
րէն վարուիլ: Ռուսիոյ դէպի հա-
յերը ցոյց տուած ներկայ համակ-
րական նշանը ճիշդ այն նշաններն
են որոնք ցոյց տրուեցան Պալքան
եան այն ժողովուրդներուն որոնք
այդ համակրական ցոյցէն քիչ յե-
տոյ ազատագրուեցան եւ դուրս ե-
լան թուրքին ճանկէն:

Սակայն Հայաստանի նկատմամբ
Ս. Բեթերսպուրկի դահլիճին ցոյց

տուած յայտնի հոգածութիւնը .
անշուշտ խորունկ արձագանք
պիտի տար այն պետական շրջ-
ջանակներուն մէջ, ուր կը շահա-
գոգաւին Արեւելեան խնդրով . և
ահա Նայե Յրայէ Բրեւէ կիմացնէ
թէ Արդիւս, Գիւրմանիա եւ Աւս-
տրիա, որոշեցին Գրան յօթա մը
տալ: Վերջնականապէս կարգադրու-
թիւնը պահանջող այն խնդիրնե-
րուն որոնք Ռուսիոյ յառաջիկա
դրացման համար միշտ պատրաստ
պատճառներ են:

Եթէ ստույգ աղբ է համաբնական
նօքաւն, Ռուսական պահանջումները
չհշտեղովը հանգեւրձ անոր դէպի
Անատոլու անկախ գնացքի մը դի-
տումները կը կանխէ:

II.

Մեր ՊԱՏՄԱՆԱՐ ԺԱՂՈՎԱՌԻՒՆ

Կ'ըզտով իրաւունքի 33 և 36
թիւերուն մէջ, վ. անուի հրաժա-
րեայ Տիկնանց «Արշալոյս» ձեռ-
նարկին ուղղուած հարցը, պարտ
կը համարէք հրապարակաւ պա-
տասխանել, զոչացում տալու հա-
մար ժողովուրդի այս արգար պա-
հանջման:

Եւրոյ երկու տարի տաւջ զո-
յալ թիւն ունեցող վառնայի «Ար-
շալոյս» Տիկնանց մասնախումբը, օ-
ժանդակ մասնախումբ լինելով, իր
զանձած գրամները յանձնած է տե-
ղական կոմիթէի կողմանէ ներկա-
յացող Պ. Արվախի և Պ. Օ. Գա-
րապետէի, փոխարէն ընկալագիր
ընդունելով կոմիթէէն:

Իսկ քօնսէրէ գոյացած հասոյ-
թին, ամսականներու վաճառումը
կոմիթէի անդամներու ձեռքով ե-
ղած և Տիկնանց Մասնախումբին
հաշուեցոյցը միայն ներկայաց-
ուած է:

Տիկնանց Մասնախումբին կողմէ
կոմիթէի յանձնուած գումարներու
մասին, պաշտօնական դիմում և
ղած է Դանիակցութեան Օրկան
Դրօշակի մէջ հրատարակման հա-
մար, սակայն զժողովարար հա-
կառակ իրենց պաշտօնական խոստ-
մանց, մինչև ցարդ տեսնուած չէ.
պատճառը ԱՆՀԱՄԱՆԱԼԻ է մեզ:
Հրաժարեալ Տիկնանց մասնախումբ
1900 մայիս 13

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒԺԻ
ԱԶԳԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Եթէ յետադարձ ակնարկ մը նետենք
մարդկութեան անցեալը ներկայացնող
պատմութեան վրայ, հոն պիտի տես-
նենք մէկէ ևս չլի ազգերու անուաներ,
որոնք այսօր գոյութիւն չունին և սա-
կայն իրենց ատենին մեծագոյն զօրու-
թեան տէրը եղած և ընդարձակ սահ-
մաններու մէջ տարածուած են: Ու նո-
րէն հոն պիտի պատահինք այնպիսի
ժողովուրդներու, որոնք հոբի և սու-
րի մէջ երկարատեւ և բազմակերպ հա-
լածանքներու շրջանները բոլորած ըլլա-
լով հանգեւրձ, ապրած են մինչև ցարդ:

Պահ մը ամբողջ ծանօթ աշխարհին
տիրապետող Հռովմայեցիք, Նեղոսի հո-
վիտէն մինչև. Հնդկաստանի սահման-
ները իշխող Եգիպտացիք, երկար ա-
տեն Արեւելիքի միահեծան տէրը եղող
Ասորեստանցիք, Փիւնիկիք, Կարթագոնա-
ցիք եւ այլք: որոնք այսօր աշխարհի
վրայ պատմական անուանէ մը զատ բան
թողած չեն:

Ինչպէս վերը ակնարկեցինք, նոյն-
պէս ալ շատ ժողովուրդներ, որոնք յազ-
գապատմութեան անցեալի այդ մեծ ազգերուն
տկար եղած են, և իրենց պատմական
կեանքի շրջանը բոլորուած է զիրենք
ջնջելու ապառնացող ուժերու գէժ կրո-
ուելով: ու ապրած են:

Ըլլալ զօրաւոր և տիրող, ու փճա-
նալ, իր վրայ ճնշող փճացող չափա-
պատմութեանց դէմ կռուելու նոյն իսկ նո-
րին անհաւատարմութեամբ, և ապրել:

Ինչո՞ւ այս հակասութիւնը:
Լուրջ հարց մ'է որ երկուսն կուգայ.
հարց մը որուն լուծումը ու պարզուի-
լը ազգերու կամ ժողովուրդներու ապա-
զան կորոշէ:

Հոռո՞ւ շատ համեստ ծագումէ մը վեր-
ջը արեւց աւրոյզ աշխարհի եւ իր մա-
մանակակից ժողովուրդները գրեթէ ա-
ռանց բաղադրութեան ունենք ուղղակի
և ունենք ալ անուղղակի իրեն հպա-
տակցանք: Իր այս մեծութիւնը ունեցաւ
այնչափ տաճի որչափ Հռովմայեցիք իր
բարոյական ամուր պահեց: Եւ ինչպէս
գիտենք պատմութենէն, մասնաւոր օ-
րէնքներ, խոստովանում օրինապահ մար-
միները աշխարհը կը հակէին հանրա-
յն բարոյականին վրայ: Բաց այն օր-
ուրէն որ Հռովմայեցիք այն ատենի
ծանօթ աշխարհին տէրը գաւառայով և
ժողովուրդները գերելով, ձգեց ամեն
պարզութիւն եւ աշխատանք ու սկսաւ
մեղկանալ, իր տոկուն բարոյակա-
նը խախտեցաւ: Հետեւանք ե-
ղաւ կերպ կերպ երկպառակութիւնե-
րու, կորուստեան, շահախնդիր մրցում-
ներու, ոճիրներու ծնունդը, որոնց տրի-
ւատեալ մէկ թատր դարձաւ Հոռո՞ւ:
Եւ արագօրէն ինկաւ այն հոյակապ տի-
եղերապետութիւնը եւ անհետացաւ
Հռովմայեցիք:

Եգիպտացիք տասնեակ դարեր ի-
րենց ժամանակին ուսման և ա-
րուեստի գլխաւոր սատարողները
եղած և Փարաւոններու իշխանու-
թեան սահմանները պահ մը Նեղոսէն
մինչև Գանգէս տարածած ըլլալովին
հանգեւրձ, իրենք ալ իրենց կարգին ին-
կան ու փճացան, երբ կորսնցուցին
իրենց մաքուր բարոյականը և պարզ
ու աշխատասէր կեանքը. այսօր այդ
մեծ ժողովուրդին, անցեալի փառաւոր
գոյութիւնը հաստատող Նեղոսի հով-
տին մէջ գտնուած հուշարձաններէն զատ
բան մը չկայ:

Կարթագոնացիք որ Հռովմայեցիք
մրցակիցները եղան ժամանակին, այսօր
Կարթագոնի աւերակներէն զատ վկայ
մը չունին ապրած ըլլալին ցոյցնող:

Ասորեստանցիք, որոնք երկար ա-
տեն իշխեցին իրենց հարեան ազգա-
րանակութեան վրայ, այն գերագոյն
հեղինակութեամբ, զոր ունէին թէ
նիւթապէս և թէ բարոյապէս, սակայն
անոնք ալ գացին, անհետացան, յաջորդ
սերունդներուն իրենցմէ միայն յիշա-
սակ թողով Նինուէի աւերակները:
Նոյն կարգին, կը յիշատակենք Փիւ-
նիկեցիք, Սպարդացիք, Աթենացիք,
Պարսիկները և այլք: որոնցմէ ոմանք
նոյնպէս բոլորովին կորսուած են, և
ոմանք ալ շատ անախանձելի կացու-
թեամբ կը քնջուին այսօր:

Պատմական այս նշանակելի պատա-
հարները կուգան որչափ պատաս-
խանել և քիչ առաջ վերը չեցնուած
հակասութեան պատճառը ցոյց տալ:

Այն ազգերը որոնց գոյութիւնը,
բարոյական ամուր սկզբունքներով ա-
պահովուած չէ, իրենց փճացումը ու ան-
հետացումը բնական է: Եւ այն ժողո-
վուրդները, որոնց մէջ բարոյականի ու-
մը կը մնայ հակառակ անապաստ կա-
ցութիւններու և իրենց բոլորած ան-

ախանձելի շրջաններուն, կ'ապրին:
Ազգի մը վիճակին վառնաւորութեան
ու բարեբաւութեան կամ ապագային ա-
պահովութեան առաժանը և իր գո-
յութեան պայմանը, իր բարոյականին
հետ միշտ համեմատական եղած է:

Պատմական այս իրողութիւններով
անվիճելի եզրակացութեան մը յանգեւրձ
յիտայ, զանք մեր ազգին, որ գլխաւոր և
միակ նպատակն է:

Այսօր ամեն հայ քիչ շատ ծանօթ է
իր պատմութեան և հոն տեսած է որ
միշտ հայութիւնը այն ատեն ծանրա-
ծանր զժողովութեանց մասնուած և
անագին կորուստներ ունեցած է, երբ
իր մէջ ամեն ժամանակէ անկի յոռի
երեւոյթներ տեսնուած են: Ինչպէս են
մասնութիւններ, եւս կոտորներ, նա-
խանձ, փառամարտութիւն, որ, զիրենք
մղած է մէկմէկ կորստի, կործանի,
քանդելու և խոյ մեղքնայնութեւ: յայտնի պայ-
քարն էր ու խոյ մեղքնայնութեւ յայտարար
նշաններն են և հայութիւնը կրցած է
երբեմն ալ ջարդերէ, հալածանքներէ,
հուրէ ու թուրէ պահել ինքզինքը, երբ
այդ հրէշ յին երեւոյթները չեն տես-
նուած:

Երբ հանրային բարոյականի անկու-
մով ամենէն զօրեղ և հեղինակաւոր
ազգեր, երկիրներ կ'իյնան ու կ'անհե-
տան ժամանակի ընթացքին մէջ,
բնական է որ այլ անկումն եւ փը-
ճացման ժամանակամիջոցի տեղադրու-
թիւնը շատ համառօտ ըլլայ այն ժո-
ղովուրդներուն համար, որոնք բարոյա-
կան ուժէ զատ կոմիտեալ որ և է ուժ
մալ չունին:

Ներկայ շրջանը հայ և համար այն
անարկու ճգնաժամն է, որ ամեն ատենէ
անկի հաստատ յինակէտի մը
պէտքն ունի, և այդ ալ մեր
հանրային բարոյականը պիտի ըլլայ:

Արդ անգամ մը տեսնենք թէ մեր
ներկայ ծանր դրութեան մէջ մեր գո-
յութիւնը պահելու եւ ինքզինքնիս ա-
զատելու չափ տոկուն է մեր բարոյա-
կանը, ինչ է անոր առաժանը և ուր
կերթայ, եւ թէ ի՞նչ առաջ:

Ազգի մը օրագրութիւններն ու կըր-
թարանները գլխաւոր և առաջին սա-
տարողները մեզուած են հանրային
զարգացման համար:

Ձգենք առ այժմ օրագրութեան այն
մասը եւս կըրթարանները, որոնք
սեղմ պայմաններով կ'ապրին ճնշող մի-
ջավայրի մը մէջ, ինչպէս են Ռուսաս-
տան, Տաճկաստան, և Պարսկաստան,
այլ անհնար արտասահմանեան ազատ
երկիրներու մասին ևս վարժարաննե-
րը, որոնց համար և ոչ իսկ մէկ ար-
գելք կայ արժանաւորապէս ստատե-
լու կըրթական գործին: Բայց այսօր
յայտնի ճշմարտութիւն մ'է թէ արտա-
սահմանեան կըրթարանները ըլլան ազ-
գային, ըլլան անհատական, շատ ու
շատ քիչ բացառութեամբ, կորուստե-
ապարէզներ, ապրելու համար չինուած
միջոցներ են, ուր անշուշտ արուած կըր-
թութիւնը խախտուի և զատարարա-
կութիւնը—եթէ կայ—հիմնական ըլլա-
լէ հետեւ է: Այս կէտը մեզ ամենուս
համար այնչափ բացորոշ է, որ լուրջ ու
չազրուութիւն մը դարձնել և անմիջա-
կան դարման խորհելէ անդի՞ անցնե-
լով, մանրամասնութեանց մէջ մտնել,
լու հարկը չը կայ:

Դաւով մամուլին. սա ալ ամենուս
յայտնի է որ արտասահմանեան մամու-
լը շատ քիչ բացառութեամբ, ժո-
ղովուրդի մաքի զարգացմանը և սրտին
ազնուացմանը ստատարելու ու անդրիս-
սիւսները ճանչնելով, զայն ուղղելու
ու վառնալէ ազատելու հանգամանքէն
զուրկ է:

Նոյնպէս հայ մամուլին ներկայ ին-
կած վիճակը և իր պարտականութեան
մեծութեանը ու սրբութեանը բոլոր-
րովին հակառակ ընթացքն ալ յայտնի
է և պէտք չունի որոշուելու:

Երբ մեզ բարոյական անուրջ մատա-
կարարելու պաշտօն ունեցող մամուլին
ու կըրթարաններուն այս յոռի գրութիւնը
նկատի առնենք, սա եզրակացութեան

պիտի յանգինք թէ եթէ երբեք երկա-
րի ներկան, այն ատեն ազգ-
վին փճացումնիս վճռուած և ապա-
հովուած պիտի ըլլայ նոյն իսկ մեզ
ձեռքովը քան թէ մեզ քննելու
աշխատող զօրեղ թշնամիներուն հալա-
ծանքը իր ամեն կերպովը:

Եւ եթէ մեր անհետացումնիս սպանա-
ցող և արդէն ալ իր գործը սկսած այս
դրութիւնը վճռական քայլով մը հիմ-
նապէս փոխելու չը փութանք, ինք-
նասպառ ենք:

ՍՈՒՆ

ՆԱԲԱԿ ԽՏԱՌԱԳՐՈՒԹԵԱՆ

«Շարժում» մէջ անցեալ օրեր
նիւշէ ստորագրութեամբ գրութիւն
մը տեսնեք, որով մեր հայ կիներ
գէպի հարկերէն պատիւը և
ազատութեան գործը անտարբեր
կընդատէր:

Յօդուածագիրը յայտնի է որ
պատմութիւն չէ կարգացած (ե-
ղիչէ պատմագիրը 5րդ դարու հայ
կնոջ քաջագործութիւններուն ա-
ռ. ջին տեղը կուտայ իր անդու-
գական գործին մէջ) և կամ վեր-
ջին ժամանակակից յեղովորտու-
թեան մէջ հայ կնոջ գերին վրայ
հիշելի չափ գաղափար չէ կազմած
և կամ ամեն ինչ գիտնալով կու-
րանայ և կուգայ հրապարակաւ ա-
նոց անունը անպատեւել անիրա-
ւաբար, այնպիսի գոհակի ու իր
ոճով մը, որ ընթերցողին զգուշ
կազգէ:

Այսօր ամենքն ալ համոզուած
են թէ, Պօէրուհին իր ազատութե-
րութիւնը ցոյց կուտայ զէնքի դի-
մելով: Բայց հիւսիս ինչո՞ւ համար
տեսնել չուզեր մեր հայ կնոջ մա-
նուանք վիշիին յեղովորտական
շարժումներու միջոցին հայրենիքի
հանրածանօթ դիրք, որոնք Պօէ-
րուհինքն աւելի գերակշիւ կը
համարուին՝ եթէ նկատի ունենանք
այն իրարու հակառակ պայմաննե-
րը, որոնց մէջ կը գտնուին հա-
յուհին և Պօէրուհին:

Պօէրուհին կը կուտի արդէն իր
ունեցած ազատութիւնը չը կորն-
ցնելու համար. իսկ Հայուհին 500
ստորներէ ի վեր իր կորսնցուց-
մին գէթ մէկ մասին, իր կեանք-
քին, ինչքին և պատիւին տէր մը
նալու համար, այն ալ ամենաստ-
կալի գժուարութիւններու մաս-
նուած և ժանգոտ սուրի մը կա-
րտ: Սակայն և այնպէս, նա
իր կոշտ ու ուխտին հատա-
րիմ, իր դէմ եղած արգելքներուն
տաւջ աննկուն, իր սեռին յատուկ
զգայնութեամբ և նրբամտու-
թեամբ անվահիր կերպով կու-
րդացաւ դուրս գալ, անգամ մ'ալ
իշխանելու թէ՛ Եղիշէի իշած նախ-
նի հայ դիւցազնութիւններուն ամեն
բարեմասնութիւններն ալ կը սու-
ցանէ իր կուրծքին տակ:

Եւ աւելորդ չենք համարիր յի-
շուածագրին ներկայացնել կամ ի-
շխանել Շաբէն, որ Սասունի ա-
պստամբական շարժումներու ա-
տեն թիւրք զինուորներու հետ
կռուելով, վերջ ի վերջոյ անհա-

տար ըլլալէ աւելի նախապատիւ համարեց ինքզինքը ապառաժնե, ինչ վար նետել իրեններով, հայու հին պատիւը փրկելու համար, հաշտակուար Հաճնցի տիկին Սար թիկը, որ իբր ծանօթ յեղափոխուհի Սարգիս Սարգիս 2 տարի բանտարկուած կը մնար իր հինգ բնակերու հիներով. կեսաւարացի Տիկին Սար. թիկը, որ նետարիոյ մէջ յայտաբարութիւնները եւ պատերը փակցնելուն պատճառաւ Պոլիս տալու հետեւ քանտարկուելու: Մարտն որ զէնքերու փոխադրութեան մէջ իր դերը ունեցած է. ինչպէս որ Պրոշովի ալ անոր լուսանկարը կենսագրականով տպած էր:

Ասոնցմէ զատ Պոլսեցի քնքուշ օրերդներ, հայրենիքի սիրոյ համար կը հրաժարէին Պոլսոյ հեշտօրի ափերէն և կ'երթային թուրքիոյ ամենամալային տեղերը, Ալաթիոյ կողմերը, հոն բանտարկուած հայրենասէրները փախընելու համար: Նոյնպէս Սր. իւս. տիկը, որ մինչեւ Պոլսեցի դէպքին ժամանակ Պոլսոյ յեղափոխական ներքին գործերուն վրայ թեւերը տարածած կը հսկէր պահապան հրեշտակի մը պէս, որ ոչ թէ միայն զէնքը ձեռքին մէջ կը ունէր անձնուէրներէն աւելի գնահատուած արժանացած էր. այլ մինչեւ իսկ զինքը ճանչցողներուն յարգանքին ալ, իր ընծայած անգնահատելի զոհողութիւններովը: 96 թ. դէպքին ժամանակ, երբ ափ մը երիտասարդներ, ամբողջ Պոլսը ալ ու սարսափի մէջ կը դնէին, նոյնպէս օրիորդներն ու կ'ինքնին էին որ փողոցէ փողոց սուր, հանգակի և քաջամարտի պաշտօնը կատարեցին ամենայն անվահերու թեամբ, և թուրքին ըսել կուտային «Այս անգամ Պոլիս կ'ործանորդը կ'ինքն են»:

Պէտք է աւելցնել նաեւ Ձէյթունցի կինը, որ Պօէրուհիէն աւելի քաջամարտութեամբ տկար զէնքով մը թուրք բանակին դէմ կ'երթէր թէֆֆիք և Մուսթաֆա Ռէսիդի փաշաներ ալ: Կնոջմէն վերաւ:

բուած հրացամար կը խօսէին Ձէյթունցի կնոջ անվահերութեան վերայ:

Ասոնցմէ զատ պէտք է նաեւ աւելցնել մեր յեղափոխական պատմագրութիւնը նուիրագործող սա վերջի ժամանակակից հերոսուհիներէն՝ ամմաճ Սիրոբի կինը, որ այնքան ուժեղ կերպով կ'ազայ չեչտեղ նախորդ հերոսուհիներու շարքը:

Հրէն հայ կնոջ վերիւ յիշուած հայրենիքի եւ ազատութեան դատին մէջ ունեցած դերին անգիտակից ձեւերով «Պօէրուհիներուն ոտքին ալտը» գերադաս կը հաւատար հայուհիին հայրենասէր գործունէութիւններէն: Ետեւոր իմ բազմապիտոյ, մեր հերոսուհիներէն իւր միայն ծանօթութիւն ունենալովը հանգերձ, ինչպէս կը հաճի իր թերթին մէջ հիւրնկալելով այդ ուրաջ ոգեւածը, արդեօք ինքն ալ կ'որ կըլլայ եւ իր խառնափնթոր հաշիւներուն համար չուզեր տեսնել հայ կնոջ հայրենասիրութիւնը. այն հայ կնոջ, որ միտնալով ընդ միշտ արձագանք տաւ նաեւ ամեն տեղի եւ ժամանակի Պաշտօնեան երկրներուն մէջ ուր կ'ազատեցաւ Ետքէ եւ Սրչալոյս մասնախմբի, որոնց արդիւնաբեր գործունէութիւններէն գոյացածները ինչ ինչ զեղծումներու շնորհիւ մոռնի մէջ կ'արտաւայտուէր:

Այդ հայուհիին էր որ Ք. (Խալի. միոյ) քաղաքին մէջ ապստամբական ոսկիհիւս գործակը իր ձեռքով շինեց եւ նուիրեց հայրենակնի բուն, եւ որուն մասին բանասիրական ալ գրուեցաւ Ետեւոր թի. ւերէն միայն մէջ վարդոս ստորայրութեամբ այդ ծանրագին գործակին՝ խաչագողներու կոկորդին մէջ հաշիւէն հտքը:

Այդ փափուկ եւ տկար սեռն էր, որ իր գործունէութեան արդիւնքը շահագործուիլը տեսնելով հանգերձ, առանց ջրատուելու նուրէն իր պարտքը կատարելու համար գործվագութեամբ մօր մը նման զգածուած անմեղ օրբիկներու աղաղակներէն, այս անգամ ալ եկաւ երկսեռ օրբականամի գլխաւոր սատարողն ըլլալ եւ ալպէսով անգամ մ'ալ հաստատել թէ հայուհին անտարբեր չէ եւ գիտէ իր ազգին ինչպէս վերաբերուիլը:

Ու տակաւին առանց ամէն ալու ելլել հրապարակաւ ըսել «մեր յեղափոխական կիները զբաղուած են ամենաաղաքիտ էնտրիքներով»:

ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԼՐԱՔԱՂ

Երապոյի հայոց հոգեւոր հովիւ Իւթիւնեան Տ. Գեորգ Եպիսկոպոս որ այս միջոցիս Բարեկը գտնուի, աջակցութեամբ Քիպարեան Տ. Վառժապուհ քահանայի, յաջողել է Բարեկի մատուաին չի. նուրիւն յանձնաժողով մը կազմել:

Կարնոյ առաջնորդական տեղապահ Տ. Զաւէն Ծ. վարդապետ տեղւոյն որբանոցին նկատմամբ Պատրիարքարան տեղեկագիր մը ղրկած է, որուն մէջ կը յայտնէ թէ որբանոցի մէջ պատապարսած որբերու թիւը 100 ի հասած է եւ թէ բաւական թուով որբեր կ'օգնակարութեան արհեստին մէջ բաւական յառաջացած ըլլալով, Սատարեան վարժարանի կ'օգնակները իրենք պատրաստած են:

Վհ. Ետեւոր բժշկապետ եւ թէհրանի Բժշկական վարժարանի Տնօրէն Վսիմ Տօրթօր Գարու թիւն խան թիւրքերուն, տասը սակի ղրկած է Պոլիս, անոր կէսը Գաւիթ Սարգիսեանի որբերուն յատկացուելու համար, մնացեալ հինգ սակին ալ, իր ծննդավայրի կեանքին թաւա գիւղի ազգային երկսեռ վարժարանին համար:

Վիէնայի Միթիթարեան Միաբանութեան մէջ ծագած երկպառակութիւնը հետզհետէ սուր կերպարանք մը առնելու վրայ է Պոլսոյ, Իզմիրի, Ալաթիի վիէնայական Միթիթարեան վանատունները միացած են վիէնայի մայր վանքին դէմ, եւ մէկէ աւելի վաղապետ թողած ու հեռացած են վիէնայէն, եւ կ'իմացուի թէ այդ վարդապետներէն մին. Միչերկրական արշապնագոսի կղզիներէն միոյն մէջ վիէնայէն բոլորովին անկախ զատ հաստատութիւն մ'ալ հիմնել է: Արդ այս վէճը քննելու համար յատկապէս վատիկան


նէն պաշտօն տրուած է Բուպան Գերապոյժանին, որ Հռոմի Աթոռին քով Հայ-Կաթոլիկ Պատրիարքութեան ներկայացուցիչն է եւ համարուուար, իբրեւ մոլեռանգ լատինասէր ու հակառակորդ Միթիթարեաններու ու իրենց ուղղութեան:

Տփղիսէ կը ծանուցուի թէ մայիս 8ին տեղական հասանգային դատարանին մէջ քննուել է Ալաթիայի եկեղեցական կալուածներուն վէճը: Բողոքող կողմը եղած է Տփղիսի Հայոց Կոնստանտին, իսկ հակառակ կողմը Կոնստանտին Գարոնցիան շրջանակի վերատեսչութիւնը: Այս կալուածները, որոնք հինգ գիւղեր կը պարունակեն, իրենց արժէքն է եղեր 50 հազար օսմ. իրաւ: Երկու կողմէ ալ հաստատուալէս կը պնդեն եղեր թէ թէ այդ կալուածները իրենց կը վերաբերի: Դատարանը երկու կողմն ալ լսելէ և ներկայացուած վաւերագրերն ու վկայագրերը բննելէ յետոյ վճռած է որ այն կալուածները նոյնութեամբ ետ դարձուին եկեղեցական պաշտօնէն: Թեան (Կոնստանտինային):

Ալաթիան Պատրիարքի քրոջ Պատրիարքարանի դէմ բացած ծանօթ դատին աւթիւ, Պատրիարքարանի կողմէ փոխանորդ կարգուած է քաղաքական ժողովոյ անդամ փաստաբան Տ. Ասատեան Մկրտիչ:

Տ. Սահակ Ծ. Վ. Բագրեւան. ղեան վանայ այցելու հովիւին եւ տեղական խառն ժողովոյ որոշմամբ առաջնորդական փոխանորդ կարգուել է:

Բազմաւիւկի մեծայարգ խմբագրապետ Վեր. Հ. Երեմեան իր առաջնութիւնը դարձանելու համար Պոլիս գացած եւ Բերայի վիէնայի Միթիթարեան վարժարանի հիւրնկալուած է: Բազմաթիւ բանասէր եւ ուսումնասէր ազգայիններ կը փութան այցելել Վեր. Հայրը:



ՌՈՒՍ ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Ռուս կիները խառնակեցութենէ պաշտպանելու եւ անոր բարոյականը զօրացնելու համար, Բեդրապոլի մէջ նոր ընկերութիւն մը կ'ազատուեցաւ նախաձեռնութեամբ Օլտէմպոլի իշխանուհի: Ընկերութեան առաջին նիստը տեղի ունեցաւ իշխանուհիին ապարանքին մէջ, եւ Վարիչ Մերակոյտին անդամներէն Ուոնի նիստը բացաւ յոյժ չափեւ ըստ իրենց թեամբ մը խառնակեցութեան վրայ: Բեդրապոլի բարձրագոյն ընկերութեան վերաբերող 300 է աւելի ունկնդիրք յուզմամբ մտիկ ըրին այս ընկերային շարքին պատմութեան: Ահա՛ համառօտութիւնը գիտնական ընկերաբանին արտասանած ճառին:


Խառնակեցութիւնը, այսինքն մարդկա

յինմարմնոյն վաճառու, իբրեւ մասնաւորաբան կերեւի մարդկային պատմութեան սկիզբը, եւ արդարեւ Հին Կտակարանի նախապատմութիւնը կ'արգիլեն իւրայեղացի կանանց այդ արեւմտի գործ գնել: Ի Բաղդէաստան, պատերազմաւ մոզ եւ վայրենի ժողովրդեան ծոցին մէջ գոյութիւն ունէր «հիւրընկալու» խառնակեցութիւնը: Ի Բաքոյն կրօնական պաշտամունքի կարգ անցած էր, այսինքն Աստղիկի պաշտամունքը: Առեղիպացիս, ի պատիւ Իսիսի կատարուած տօներուն ատեն ամենատեսակի թիթեւաբարոյութիւն կը տեսնուէր: Ի Յունաստան, Քրիստոսէ վեց դար առաջ, անբարոյականութիւնն ա՛յն աստիճան առաջ գացած էր որ Սոկրատէսը օրէնք հաստատեց պաշտօնական խառնակեցութիւնը: Հռոմէականացի մէջ կը գտնենք «ներողամտութեան» տուհիւր եւ մասնաւոր օրէնքներ խառնակեցութեան համար: Միջին դարն ամբողջ Եւրոպայի համար բարոյ շմանը չտեսնուած ապաւանտութեան ժամանա

կամիջոց մը եղաւ. անկէջ վերջն է որ բուռն հակադրեցութիւն մը սկսաւ. ծայրայեղ վատթարացման դէպք, եւ խիստ օրէնքներ գրուեցան: Պատմութիւնը այնուհետեւ լեցուն է սոսկալի պատմութեան ուրք հնարակեցական պատմութեան համար մարդկային միջ վաճառու, իմա՛ բղջիւխութիւնը, եւ այս պատճառաւ միջին դարու մէջ 800 անպարկեշտ կիներ մէկ անգամուն ծովը թափուեցան: Ըսինք անցողակի թէ այս չափազանց խիստ անօրինութիւնն ըրաւ նոյն ժամանակի ամենէն վատթարացող մարդիկներէն մին: Արդ ժամանակաց մէջ խառնակեցութիւնն իբրեւ շահու աղբիւր կը գտնուի ամենէն քաղաքակիրթ ինչպէս նաեւ ամենէն անմշակ ժողովրդաց մէջ, սա՛ տարբերութեամբ որ առաջինները փափաք կը յայտնեն մերթ ընդ մերթ չափ ու սահման դրնել խառնակեցութեան: Բայց ամեն երկրներու մէջ վիճակագրութիւնը կը ցուցնեն թէ գաղտնի խառնակեցութիւնը շատ աւելի տարածուած է քան

կանոնաւոր խառնակեցութիւնը. ուրիշն օրինքին ազդեցութիւնը շատ ազդեցիկ չէ, եւ կառավարութեան միջամտութիւնը շատ մեծ արժէք չունի: Գիտնական մարդոց խոզարկութեանց հայելով, խառնակեցութիւնն հարիւրին 43ը այս նողկալի առեւտուրին անձնատուր կըլլան բարոյց բնածին ապակաւութեամբ, իսկ հարիւրին 57ը ցուալի եւ սոսկալի պարագաներու հետեւանք կ'ընեն այս ողորմելի վիճակին մէջ: Բերեմն դարման կըլլայ այս ընկերային շարեաց, եւ ասոր համար ամեն ելկիրներու մէջ պաշտպան ընկերութիւններ կը կազմուին կանանց անկախ արգիլելու կամ տրոջէն դուրս հանելու այս հարիւրին 57ը կ'ինքնորոշ, կեանքի տարբեր պայմաններուն մէջ, անշուշտ պարկեշտ պիտի մնան:

Բիւզանդիոն



$$\left(\frac{1}{2} \right) \left(\frac{1}{2} \right)$$

— Պունտան էգվել Տիւրզիւ տա-
զրնտա զուհօւր իտէն իխթիլալ
սէպէպինտէն տէրտէսթէ սիւրկին
օլընմըլ օլւն Տիւրզիւ Շէլսէրինէ
տէ ափօլ օլընարազ հէր կիւն էօ-
թէտէն պէրստէն Սթանպօլա կէ-
թիլիլուպ մէկէթէթլէրինէ հօլա
նըրլագտա տըրլտըր :

— Բօշիկը նիզամասնէսի մէսէէն.
սինտէն տօլալը Պուկարիտնըն
պպը ժահալէրինտէ զոհոյր ի
տէն գարըրգըզլար շիտիլիք
պիտպիւթին թէսքին օլուռ :

Ռուսերանքն Քիւլվ շէհրինտէն վէ
րիլէն պիր թէլէկրաֆա նազարէն .
պուս սոն օն կիւն զարֆնտու , 0 .
տէսատա 76 քիշի , Քիէվտէ 78 ,
լէհիստանլըն փայթախթր օրան
վարչաւիստա 125 քիշի տէրաէսթ
ու հապս օլըմըլլար , Քէզու պուն .
տան իքի ալ էվվէտէ թէքլար
Բէթեքպուրկտա 200 քիշի վէ
լէհիստանլըն փայթախթրնտա 100
քիշինին թէվզըֆ ու հապս օլըն .
տըղը իշիտիսիշ իտի , Պու թէվ-
զըֆաթ հագզընտալ վէրիլէն մա .
իւմաթա նազարէն Լէհիստանլըն
տախիլի իշլէրինտէն տօլալը օլար-
դընր պիտիթիլմէքտէ վէ Լէհիս .

— Դուռնա՜ն է վէճի Զիւսիէմիչ.
տէ Զինտէքի գաւրջը զըզ պէօիւ
միւշ օլտըզնը. վէ պու սէպէպ-
տէն տօլալը Բուս, Ինկիլիզ վէ
Ֆրանսըզ տսկէրլէրի գաւալա չը.
գաւրրուպ Բէքինէ տօղրու երկրիւ

— Թւերար Թիէն-Չին շէհրի
եագընլարընտա տաիէր իւչ պէօ-
յիւք պինա երգմըչլար . պր. պի.
հալարտան պիշիսի Չարդըդ նամ
ինկիլիք պանգասընըն իմիչ :

—10,000 գատար Պօլիէրի Բր.
Բէթօրիա էթրոֆընտաքի լէֆէ.
Լէրի հալա լոսթմուչար տըր:

Պուլկարիոյ ազատութիւնէ ա.
ռաջ Պուլկար ժողովուրդին նիստ
ու կայքը և թրքական հարստահա.
րութիւնները նկարագրող այս գր
ծը կ'ալ ժէ որ ամեն հայ կարգա-
կը ծախուի իրաւունքի խմբա-
գրատունը, Զիւլպէ Պ. Դ. թիւ.
թիւնճանի քով և Գահիրէ Պ. Կ
Եղնկացեանի խանութիւն

Գնեաւմն ե վաճառւմն զունաղան
գործածուած նաւակաբլօշկներու,
փոխանակութիւն շատ գոհացու-
ցիչ պայմաններով. ո եւ է տեղի,
կուժեան համար պէտք է աւել-
ցնել փոստայի ծախքը պոստաւ,
խանի համար :

Գրքեր, տետրակներ, հրաբխաբլի, տուճակներ եւ այլն կը տպագործին աւանդաբարամտելի գնիով ու գոհա, ցուցիչ պայմաններով: Չմարտնէն, յուարէն եւ պոնարիւրէն փորթի գործեր եւ կը պատրաստուին:

Օտար երկրներէ եւ ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով եւ ճշդի գործարարներին:

Դիմել Ա. Զարպհանեկեան գր^ա
տուն :

Հէր նէ գատար Ուէսթմինստար
ինկլիլիզ կազէթասը Մ Քրիւկէ
րին էսիր տիւշտիկինի եազմը ի-
տի իսէտէ, ալընան րէսմի թէ-
լէկրաջլարա նազարէն, Մ Քրիւ-
կէր Բրէթօրիա զապթ օլընտըզը
էանատէ գաչմոյա մուալֆագ օլ-
մուշ վէ շիմտի Միտէլպուրկ չէհ-
րինէ չէքլիմէկէ հազըրլտնիւշ տըր-
— Դօէր Ժէնէրայր Լուի Դօթա